գայ մինչև ի Աքանդրունայ. անտի ընդ ցամաք գնան մինչև ի Պէրաճուկ, Եփրատ գետոնն իջանեն ի Բաբիլոն. քանզի Հասան փաշան սատակեր է և տղին տուած է զհզօր փաշայութիւնն, ոմանք ասեն թէ ամրվէյիզն մինչև ի Համատան եկեր է, կամի զԲաբիլոն առնուլ, որ անդի մինչ ի Մաքուն և ի Մատինան գնալ զվէգն առնուլ, Ջանքն և դիտաւորութիւնն այն է։ Եւ ոմանք ասեն թէ Բաբիլոնն արաբացիքն բոլորած են, թէ որչափ քարավան անցանի զամէն կթալանեն։ Եւ Թիֆլիզու բնաւ ստոյգ զրոյց չգայ, ոմանք ասեն զկնի Բդ անգամ առնելոյ թուրքին, դարձեալ աճամն առեր է, և այսչափ ասքար և փաշայ Ջարդեր է. ոչ գիտեմք որպէս լինելոց է, բնաւ չեն ասեր թէ ում հետ սաֆար պիտի առնեն, Մոսգովի անուն չեն տար. և այնչափ ասքար կառաքեն։ (Տէր Մարգար առ Մխիթար. 1724 Մայիս 16, Սքանտար)։

Բ.

Եթէ կամիս իմանալ որպիսութիւն այսմ կողմանց ոչ է կար ի գիր արկանել վասն աւերմանց Արարատեան աշխարհին, ևս առաւել Թիֆլիզու ապստամբաց քաղաքին, որոյ զրաւեալ եղև ի ձեռն այլազգաց և գերիք անթիւ ի ազգէն վրաց և հայոց ևս և ի պարսից կանայք և աղջկունք մանկունք և երեխայք, որոյ ի տեսանելն որպիսի աղէտ և կսկիծ հասանէր, ոչ թէ միայն ի սիրտս արանց ողորմածաց և հաւատացելոց այլ քարացեալ և անխիղճ այլազան սեռից, որոյ նոյն ինքն ամենակարողն Քրիստոս զգինս արեան իւրոյ խնայեսցէ և այց արասցէ այգոյն զոր տնկեաց աջ իւր։ (Հռիփսիմէ առ Մ. Աբրայ. 1724 մայիս 22 [տեղի?])։

Ժ.

Արդ գնացի հայոց ժամն առ ի տեսանել զվրդանէսն և զսահէթչին, ուր ժողովեալք ի միասին, զկնի այլոց բանից ի մէջ բերին զբան տօնացոյցին, ժամերգութեանն և պատարագին, ոմն ասէր այսպէս և ոմն այնպէս. իսկ մինչ յիշեցաւ անուն քո զկնի Խաչատուր վարդապետին, թէ նոքա միայն կարող են ի ձեռն բազմազան աշխատութեանց ուղղել զայն ամենայն, եթէ սուրբ Ժողովն հրամայեսցէ. յայնժամ վեր թռեաւ տէր Ստեփանն և ասաց, եթէ Մխիթար վարդապետի ձեռացն անցանի, նա կու ֆռանկացուցանէ զհայոց ժամակարգութիւնն։ Եւ ես պատասխանեալ ասացի թէ սղալաբար իմացեալ ես, զի Մխիթար վարդապետն է բոլորովիմբ ընդդէմ այդպիսի կարծեաց, և Ջանք նորին է բառնալ զտարաձայնութիւնն և սերմանել զսէր և զմիաբանութիւն, ոչ խնդրէ զիւրն, այլ զօգուտն հասարակաց, քանզի է ցանկացող փրկութեան հոգւոց, և վասն այնորիկ տուեալ է զանձն իւր ի աշխատանս, ոչ Ջանայ թէ այլք հետևիցին կարծեաց և արարողութեանց իւրոց, այլ սպասէ այցելութեանն Աստուծոյ, որով զարթուցեալ սուրբ Ժողովն՝ հոգայցէ սրբազրել, ուղղել, կարգաւորել և կանոնաւորել, զի ընթանայցեն ամենեքին այնուհետև համակերպաբար. եթէ դու զմի կողմն նկատիցես, նա նկատէ զտասն. և թէ դու զԺ, նա զհազարն։ Ամենեքին եղեն Ջատագով բանիցս այսոցիկ.....։ պատճառն է այս, զի խանգարիչքն յարևելեան ասեն, թէ Մխիթար վարդապետն է ի կողմն հայոց. և յարևմտեանն ասէ, թէ ֆռանկացուցանէ, ուրեմն ես ի մէջն, որ ի յաջ խոտորողին՝ երևիս ի ձախն. և ի ձախն խոտորողին՝ երևիս ի յաջն՝ իմ սիրականս։ (Ցօնան եպս. առ Մխիթար Աբրահայր, 1724 մայիս 27, ի դարն Ս. Օնոփրիոյ, ի Հռոմ)։

ԺԱ.

Եւ թէ վասն նորաշէն եկեղեցոյն մեր հարցանես, որ եղեր դու պատճառ շինման նորա, քոյին մաքուր աղօթիւքն հասինք ի յաւարտն բարձրացչէն կաթուղիկէիս, և կամարայպատ, վասն քոյին սուրբ խրատուն բօվանդակ ժողովուրդն շարժեցաւ և բազում աշխատութեամբ աւարտն հասինք... և թէ հարցանես վասն աղջիկ տղայոցն՝ մինչև ցայժմ կու ուսանին ըստ կարեաց մերոց ԺԸ աղջիկ